



# CORNER ԱՆԿԻՏ



«Լրագրություն» Ընտրովի Դասարանի Երկամսեայ Թերթ  
Bi-monthly Publication of "Journalism" Elective Class

School Year VI, Volume 1  
Դպրոցական ճրդ Տարի, Թիւ 1

October 2011  
Հոկտեմբեր 2011

## Հայաստանի Անկախութեան Նուիրում Զեռնարկ

Տաթևիկ Ազազեան

Սեմպտեմբեր 20, 2011ին հայկական բաժանմունքի կազմակերպութեամբ, Պոլսահայկական Սրահին մէջ կատարեցինք Հայաստանի Հանրապետութեան 20 ամեակին նուիրում ձեռնարկ մը, որուն կեդրոնին կար սառ հիկներու ցուցադրութիւն մը:

Օր. Լորա Գուլումեանը կատարեց բացման խօսքը ու ներկայացուց օրուան հիւրը՝ լուսանկարիչ Պարոն Յովհաննէս Ճերէճեանը: Յետոյ, «Երգչախումբ» ընտրովի դասարանի երգիչները կատարեցին Հայաստանի ու ՀԲԸՄի քայլերգները: Արի Գազանճեան արտասանեց Ալիսիա Կիրակոսեանի կողմէ գրի առնուած բանաստեղծութիւն մը: Վերջապէս, բեմ հրաւիրուեցաւ օրուան հիւրը՝ լուսանկարիչ Յովհաննէս Ճերէճեանը: Յայտնի լուսանկարիչը պատրաստած էր հայրենի տեսարաններուն նուիրում յայտագիր մը, որ կը բովանդակէր մօտաւորապէս 80 լուսանկար: Այս նկարները տեսարաններ էին, երեւելի շէնքեր, յուշարձաններ, վանքեր, բնութեան գեղեցկութիւններ... բոլորն ալ նկարուած 70-80ական թուականներուն Հայաստանի մէջ: Անկեղծօրէն, շատ գեղեցիկ ու տպաւորիչ նկարներ էին անոնք. բոլորս հիացած դիտեցինք:

Այս ձեռնարկը շատ լաւ միջոց մը եղաւ Հայաստանի անկախութիւնը տօնելու համար: Բոլորս անգամ մը եւս ոգեւորուեցանք ու հպարտացանք մեր պետականութեամբ եւ հայրենիքով: □



## Meet and Greet

Danica Tashjian

On August 15, 2011 in A.G.B.U.'s Boyadjian Hall, took place our annual senior-freshmen breakfast.

This action-filled event was hosted by both the senior class and student council. There is a reason

worked! The freshmen broke out of their shells and joined in games such as "Human Scavenger Hunt".

This joyous event introduces not only class members, but teachers and our principal. It has become an opportunity to spread the AGBU



Juniors meet Seniors at the "Meet and Greet" event

for the happening of this event. It introduces new, incoming freshman to our school's atmosphere. United with the Class of 2012, this day was full of activities, competitions, greets, and food. First, seniors began to mingle among freshmen, who were usually shy. This definitely

experience and spirit, and also to get the freshmen class prepared for the upcoming school year.

Everyone had a good time, as people were running around, trying to win first place in games. It was a great experience for both the Class of 2012 and the Class of 2015. □

## Մ. Մեծարեցը Բժիշկի Աչքով

Արամ Եսայեան

Միսաք Մեծարեցի կեանքին եւ գրականութեան նուիրում աշխատանքներու ծիրէն ներս, մեր հայերէնի ուսուցչին հրաւերով, 15 Սեպտեմբեր 2011ին, դպրոցի ծնողներէն Բժ. Պալեան այցելեց իններորդ դասարանի յառաջադէմ խումբը եւ դասախօսութիւն մը տուաւ «Միսաք Մեծարեցը եւ Թորախոր» նիւթին շուրջ:



Տղթ. Պալեան 9-ի աշակերտներու հետ

Բժ. Պալեան նախ մեզի բացատրեց հիւանդութեան պատճառներն ու ախտանշանները, ապա՝ անոր տեսակներն ու բուժումը՝ բոլորիս համար հասկնալի բժշկական լեզուով մը:

Յարգելի հիւրը ապա ծանրացաւ թոքախտ-գրականութիւն յարաբերութեան վրայ: Ան Միսաք Մեծարեցի եւ այլ նշանաւոր հայ բանաստեղծներու օրինակներով բացատրեց թոքախտաւորի մը ներաշխարհը: Մանաւանդ հետաքրքրական էր լսել այն տարրաբանական փոփոխութիւնները, որոնք թոքախտաւորի մը ուղեղին մէջ կը պատահին ու ծնունդ կու տան մելամաղձոտ մտածումներու եւ գիշերային տեսիլքներու:

Բժ. Պալեանը հրաժեշտ տալէն առաջ միաբերան արտասանեցինք Մեծարեցի «Սիրերգ»ը: Թէ՛ յուզիչ էր այս օրը եւ թէ՛ տպաւորիչ: Հիմա անելի լաւ կը հասկնամ բանաստեղծին ներքին աշխարհը եւ զգացումները: Դասարանի մէջ շատ անգամներ կատարած ենք «Սիրերգ»ի խմբային արտասանութիւն. բայց, ամենէն զգացականը եղաւ այս վերջինը: □

Movie Night

## Napoleon Dynamite

Carina Pambakian

On August 19, 2011, Friday, was the first ever movie night that AGBU Vatche and Tamar Manoukian High School students have ever experienced before.

The movie event took place on the lawn area of our campus. The parents that are part of the Parent Support Group (PSG) had organized this as the first event for the years of 2011-2012 to come join and cooperate to support our school by fundraising.

During the day, before the night of the event, student council had the entire school vote for a variety of different movies to choose from. The final vote was for Napoleon Dynamite. This 2004 film was directed by Jared Hess. It was good considering the movie was about a high school's first day of school, so it was related to the fact that's was just our first week of school as well. There was a lot to relate with this



movie; it consisted of a variety of different events and experiences that a high school has and what a typical school life would include; such as dances, and student council elections.

This was a warm welcoming for the new school year. I can't wait to see the following that will come our way! □

### Յոգնած Արծիւը

Նաթալի Մաշարեան



Արծիւը եւ իր ծիւցածածկ լեռները

Երբ ես երեխայ էի, ուզում էի փոքր բոյր կամ եղբայր ունենալ: Իմ ծնողները ի վիճակի չէին որ երեխայ պահէին նորից:

Տարիների ընթացքին որ ես մեծացայ իմ ծնողները որոշեցին, որ փոխանակ երկրորդ գաւակ ունենալու, Նաթալիի, իրենց միակ դուստրի համար, գրադումներ ստեղծել ու այդպէս փարատել նրա առանձնութիւնը:

Այսպէս՝ ես նախ արձանագրուեցի նկարչութեան յատուկ դասընթացքների, յետոյ՝ դաշնամուրի յատուկ դասընթացքների, յետոյ՝ մարզանքի յատուկ դասընթացքների...

Այդ խճողած վիճակում երբ սկսեցի բուն դպրոցի թուրքամուտեան դասերում դժուարանալ, ծնողքս այս անգամ որոշեց կրկին օգնել ու ինձ արձանագրեց... թուրքամուտեան յատուկ դասընթացքների:

Հիմա, ամբողջ Լոս Անջելեսում ինքնաշարժի մէջ եմ, այս դասից այն դաս, այս ակումբից այն ակումբ:

Ապրում եմ Թահանկա քաղաքում. դպրոց գնալը՝ քսանհինգ րոպէ է, ետ գալը՝ նոյնչափ: Նկարչութիւն՝ երեսուն րոպէ, թուրքամուտեան՝ քսան: Փաստօրէն ես միշտ ինքնաշարժի, այդ վանդակածե մեքենայի մէջ եմ ապրում, զրկուած՝ իմ ազատութիւնից: Շատ եմ յոգնում. բայց յոյս ունեմ որ ես ապագայում բարձր տեղ կը հասնեմ եւ ետ

կ'առնեմ իմ օրերը, ժամերը... որոնք հիմա գրաւուած են ուրիշներու կողմից:

Ես ինձ համեմատում եմ այն խեղճ արծիւին հետ, Ջապէլ Եսայեանի պատմութեան այն հերոսին՝ որ Փարիզի բաաբանական պարտեզի մէկ վանդակում խոկում էր իր «ծիւցածածկ լեռներ»ը երազելով: Ազատութիւնից զրկուած այդ գիշատիչը մերժեց ապրել, արհամարհեց իր առջեւ նետուած միսի կտորները: Անտեսելով իր շուրջի գեղեցկութիւնները՝ աչքերը փակ, նա մահացաւ:

Ես հաստատ չեմ լինելու նրա նման. կ'աշխատեմ, որ ետ տիրանամ իմ սեփական կեանքին: □

### Մեր Ծիսական Լեզուն

Նարեկ Խոտանեան

Մենք հայերէնի դասարանին մէջ ուսումնասիրեցինք «մետալ» եւ «կենդանի» լեզուները: Երբ հիւթը հասաւ «ծիսական» լեզուին՝ թէ հայ եկեղեցւոյ լեզուն գրաբար՝, թէ աշխարհաբար պէտք է որ ըլլայ՝ դասարանը ունեցաւ սուր վիճաբանութիւն եւ գաղափարի երկճիւղում. յայտնի եղաւ, թէ մեր մէջ կային «դասական»ներ եւ «գործնական մտածող»ներ: Ահա անոնց դեր ու դէմ կարծիքները:

Գրիսթինա Լուսինեան «Ո՛չ. աշխարհաբար հայերէնը ծիսական լեզու պէտք չէ որ դառնայ, որովհետեւ կրօնքի յատուկ լեզու չէ: Միևնչեռ գրաբարը՝ իրապատուկ է: Ան էր այն լեզուն՝ որ Մեսրոպ Մաշտոցը կը գործածէր: Գրաբարը սուրբ է եւ մաքուր ու ան եկեղեցւոյ մէջ պէտք է որ գործածուի: Գրաբարը մետալ լեզու կրնայ ըլլալ ժողովուրդին համար, բայց պէտք է կենդանի մնայ եկեղեցւոյ մէջ»:

Էլիզապէթ Յուսեան «Աշխարհաբար հայերէնը պէտք չէ որ ծիսական լեզու դառնայ: Հայերը այսօր իրարու հետ գրաբար չեն խօսիր: Միակ տեղը, ուր մենք գրաբարը կը լսենք՝ եկեղեցին է: Արդե՞ն մեր բոլոր թերթերը, գիրքերը եւ դասագիրքերը աշխարհաբար են: Գոնէ մէկ բան պէտք է գրաբար մնայ, որպէսզի պահպանուի մեր դասական լեզուն»:

Կրէյս Խանլեան «Աշխարհաբարը պէտք է որ ծիսական լեզու ըլլայ. այն պատճառով, որ մենք կարենանք աղօթքները հասկնալ: Առաւելաբար՝ գրաբար լեզուն օրէ օր մետալ լեզու կը դառնայ: Հետեւաբար, անելի անգործածելի կը դառնայ»:

Փազլին Փոսթաճեան «Ես կը կարծեմ որ աշխարհաբարը ծիսական լեզու պէտք է որ դառնայ: Ես այսպէս կը կարծեմ, որովհետեւ ժողովուրդը չի կրնար պատարագը հասկնալ: Մեր ծի-

սական լեզուն այսօր գրաբարն է ու միայն վարդապետները կը հասկնան: Մարդիկ կան որ Աստուծոյ ծանօթ չեն, անոնք իրաւունք ունին իրենց կրօնքը աշխարհաբարով կարդալու եւ սորվելու»:

Նարեկ Խոտանեան «Այո, ես կը կարծեմ թէ աշխարհաբար լեզուն պէտք է որ գործածուի իբրեւ ծիսական լեզու, որպէսզի մենք կարենանք հասկընալ աղօթքները: Այն ատեն անելի հաճելի կ'ըլլայ եկեղեցին, անելի մարդիկ կ'աղօթեն եւ անելի շատ կը հաւատան: Ես շատ կը սիրեմ եկեղեցի երթալ, բայց երբեմն կը նեղանամ, քանի որ չեմ կրնար հասկնալ աղօթքները»:

Թալին Ազազեան «Աշխարհաբարը իմ կարծիքովս կը նշանակէ, թէ ամբողջ աշխարհը կը գործածէ, իսկ գրաբարը՝ միայն եկեղեցականները: Պէտք է որ ծիսականը ամբողջ աշխարհը հասկնայ ու գործածէ: Եկեղեցին է որ Աստուծոյ տունն է եւ ժողովուրդը պէտք է որ գիտնայ անոր յարգը»:

Տաթևիկ Ազազեան «Ես չեմ կարծեր որ աշխարհաբարը ծիսական լեզու պէտք է որ դառնայ, գրաբարը Աստուածաշունչի լեզուն է ու անելի լաւ կը ծառայէ իբրեւ ծիսական լեզու: Աշխարհաբարը այն հարստութիւնը չունի որ ծիսական լեզու դառնայ: Աշխարհաբարը լաւ կ'ըլլայ եթէ մնայ իբրեւ սօսոնայ խօսակցական լեզու»:

### Խմբագրական

Պրիանա Բամպակեան

«Անկիւն»ի յարգելի համակիրներ,

Մենք, իբրեւ լրագրութեան դասարանի հայերէնի բաժնի երիտասարդ խմբագիրներ, պատրաստած ենք դպրոցական ընթացիկ տարուան առաջին թիւը: Մենք փորձեցինք ձեզի հրամայել հետաքրքրական թերթ մը:

Այս թիւին մայր նիւթը մեր դպրոցի հիմնադրութեան հինգամեակն է: Մենք մէջտեղի գոյգ էջերը նկարներով զարդարեցինք. այսպէսով՝ բոլորը կրնաք վերապրիլ այդ բացառիկ ձեռնարկին հաճելի ու ընտիր պահերը:

Թերթին մէջ ունինք բազմաթիւ գրութիւններ եւ ուսումնասիրութիւններ. Միրել Քէօթօլլեանը գրած է Հայաստանի «Երոտեսիլ» երգի միջազգային մրցոյթի մասնակցութեան պատմութիւնը: Իսկ Արի Գազանճեանի «Իմաստասիրական Խօսքեր»ը կը շարունակէ մեզ ներշնչել իր փիլիսոփայական մտածումներով եւ բարոյական խորքով:

Տրդ Էջի վրայ հայրենի լուրեր ամփոփեցինք. Նարեկ Խոտանեանը գրի առաւ Ստեփանակերտի օդակայանի վերաբացման լուրը: Իսկ աշխարհի ամենագեղեցիկը ընտրուած հայկական դրոշմաթուղթի լուրը գրած է այս խմբագրականին հեղինակը: Սարին Քէշիշեանին նիւթն է, թէ «Հայաստան»ը քանի՞ անգամ որոնուած է «Google»ի մէջ: Որոնման այդ թիւը կարեւոր նկատեցինք մեր պզտիկ հայրենիքին համար. արթեօք աշխարհի վրայ քանի՞ հոգի հետաքրքրութիւն ունի եւ կ'ուզէ գիտնալ մեր երկրի եւ մշակոյթի մասին:

Իսկ տասներորդի աշակերտները իրենց անձնական կարծիքներով այսպայտուեցան գրաբարի եւ անոր իբրեւ ծիսական լեզու գործածութեան վրայ:

Տրդ Էջի վրայ դուք պիտի կարենաք կարդալ իմ գրչակիցներուս ստեղծագործ երեսակալութիւնը. անոնք հարցազրոյց կատարեցին մահացած յայտնի երէք հայ գրողներու հետ: Անոնց հարցում ու պատասխաններու մէջէն ընթերցողը անելի մօտէն պիտի ծանօթանայ անոնց կեանքին ու ներաշխարհին:

Մեր դասընկերուհիներէն Մէրի Հիլալեանը ունի Շագ Գէորգեանի մասին կենսագրութիւն-ուսումնասիրութիւն մը: Ես հպարտացայ Մէրիին հետապնդող աշխատասիրութեամբ. ան սիրելով իր նիւթը եւ անոր հերոսը, Տօթթ. Գէորգեանը, յարատեւ կարդաց ու գրեց այդ «Մահու Հրեշտակ»ի մասին: Երբ մենք լսեցինք, որ Տօթթ. Գէորգեանը մահացած է, մտքիս մէջ Մերիին յիշեցի: Ան շատ կ'ուզէր որ օր մը իրեն ծանօթանար:

Բարի ընթերցում բոլորիդ: □

### Editorial

By Sevag Podrumyan

Welcome back AGBU Vatche and Tamar Manoukian High School family. As we are looking forward for a better school year, as the students of Journalism Elective Class, we are also seeking for a better school magazine.

A.G.B.U Vatche and Tamar Manoukian High School has improved for the better in numerous splendid ways. One of the new good improvements we started last year was getting smart-boards in a few classes, but this year we have it in all our classes. For math, the teacher does not need to spend time on drawing graphs, they can save the problems and go back to it. This is very helpful to us as students, and for teachers. For science, we can look up experimental videos and the video quality is better than before.

August 18, 2011 it was our first full day at school, we knew we had new caterers, but we did not expect them to be this good! Every student at Vatche and Tamar Manoukian High School believes we improved the quality of our snack and lunch by hiring this professional company.

Our school decided to also improve in sports, so we now have a new athletic director and a new coach. We welcome Ms. Mirna Bronsozian as our athletic director and Richard Harris as our boys' basketball coach. Also we would like to congratulate two of our juniors, Sareen Habeshian and Cynthia Kozian as our student council president and vice-presidents.

This year we started our school on August 18, 2011, two weeks earlier than usual. We first started by complaining, but now that we look at it as a good thing for us because when the first semester finishes we have our Christmas break, we will not worry about taking a midterm once we return back to school, and AP courses finish in May, we will start our 2012 summer break during then.

We hope you enjoy the latest issue of our publication. We used our creative writing skills to put this newspaper together. Please write back to us with any comments or questions you have. □

### Life on Track

The Corner runs a series of interviews, focusing on new teachers that make up the faculty and administration at AGBU Vatche and Tamar Manoukian High School. We are happy that they have joined our school and look forward to getting to know them better.

An interview with our new athletic director Mrs. Mirna Bronsozian

Raffi Kazarian  
Aram Yessayan



Mrs. Mirna Bronsozian

On Monday August 22, 2011 we interviewed Ms. Mirna Bronsozian, the new athletic director and girls' varsity coach for our school. She made time before volleyball tryouts and answered our questions, attentively and patiently.

A little background about her; Coach Mirna graduated from Pasadena High School. She started playing basketball at a very young age. She said that she was inspired by Pasadena's A.G.B.U. Chapter.

Our next question was pertaining to her career as a coach. When we asked what would she be doing if not coaching, she answered: "This is the only profession I would be doing."

She is doing a remarkable job so far organizing the athletic program. We also asked what her goals were for this year's athletic program. She answered: "I want a fun, exciting, successful program while doing things that have never been done before and that's full of spirit. I am, as an athlete, sure this year will be full of these things."

We also asked her expectations for this year's varsity, and JV team's boys and girls. Last year's girls volleyball team made the first round

### “Nutritious” Idea

Andrew Tahmazian

This year our school brought vending machines for the first time. The vending machines have all sorts of snacks, and fruit juices.

For the students vending machines are useful, and they make us very productive by giving us extra energy, and nutrition. Many of the students spend half their money on snacks, rather than actually eating lunch at school. The vending machines are used mostly



after sport practices and games after which we rush to them.

To be honest, I think the vending machines are an amazing addition to the school. I usually buy two snacks a day off the vending machines. My opinion on the vending machines is that it's very useful, and the administration should bring more vending machines. This also helps make our school more money (simple economics). □

### Spartans Trivia

We have prepared a trivia quiz for you. Fill in the blank lines with correct answers, and be the first to bring the newspaper to one of us—we are very visible on the campus- for a surprise.

1. What is the school clerk's name?
2. What is the school's security guard's last name?
3. Who is the Director of Business Operations at the school?
4. Which sport is the school's athletic director coaching?
5. Who is the student council advisor this year?
6. Which website do we use to check our grades?
7. What after school activity does Mr. Davidian run?
8. Who is the captain of the cheerleaders?
9. Who makes our school uniforms?
10. Who was the very first student to enroll at our school?
11. Where did the graduation banquet take place last year? □

### Իմաստասիրական Խօսքեր Գ.

Արի Գազանճեան

- Յաջող վերջաւորութիւններ ծնունդ կ'առնեն համեստ սկիզբներէ:
- Ինչ վիճակի մէջ որ ըլլաս, միշտ համեստ եղի՛ր:
- Վսեմութեան ձգտիր, ոչ՝ կատարելութեան:
- Չպաքարած մարդիկ չեն հասկնար յաջողութեան հաճոյքը:
- Միակ բանը, որ կը կամրջէ քեզ երազներու՝ աշխատանքն է:
- Յաջողութիւնը ամենաբաղոյր վրէժն է:
- Արժեւորե՛ ա՛մէն առիթ. ուրիշներ կ'աղաչեն անոնց համար: □

# ՄԵՐ ԴՊՐՈՑԸ

15 Ապրիլ 2011, Ուրբաթ օր, տօնեցինք մեր դպրոցի հիմնադրության հինգամեակը: Այս զոյգ էջերը ձօնուած են այդ ձեռնարկի կազմակերպիչներուն և մանաւանդ մեր աշակերտութեան, որոնք բեմի վրայ մեր հպարտութիւնը եղան:



Յայտագրի առաջին բաժնի, «Խօսք Երախտագիտութեան և Հաւատքի», ներկայացումը կատարեց Բաֆֆի Պօղոսեան և Դալար Մարտիրեան:



Մեր դպրոցի «Նուագախումբ» նորակազմ ընտրովի դասարանը, խմբավար Ճէմա Հարթֆըրտի ճպտին տակ՝ Պէթրոֆընի և այլ դասական յօրինողներու հանրած անօթ գործերով հիսուած նուագաշար մը հրամցուց ներկաներուն:



Դպրոցի «Երգչախումբ» ընտրովի դասարանի խոստումնալից երգիչ ու երգչուհիները յայտագրի բացման Հայաստանի Հանրապետութեան և ՀԲԸ Միութեան քաղերգները կատարեցին, ապա յաջորդող չորս բաժիններուն համար բեմ վերադարձան պատշաճ երգերով:



Յայտագրին երկրորդ բաժինը, «Խօսք Լոյսի և Յոյսի»ն ներկայացուցին Անդօ Գուլումճեանը և Քաթրին Թապաբեանը:



«Պարախումբ»ի աշակերտուհիները գոյնի և նուրբ շարժումներու համերաշխ պատկերներով օժեցին հանդիսատեսներուն աչքերը: Անոնք հայրենիքին նուիրուած «Ճանաչի՛ր» պարով՝ խանդավառեցին սրահը:



«Թատրոն» ընտրովի դասարանի աշակերտները հմտօրէն ներկայացուցին Անդրոն Զէյտովի «Ամուսնութեան Առաջարկ» գործէն զուարճալի տեսարան մը:



Ալեքս Պէրպերեանը «Խօսք Լոյսի և Յոյսի» բաժնէն Ներս ձայնի նուրբ ելեվէջներով արտասանեց՝ ուսուցիչներուն նուիրուած բանաստեղծութիւն մը:



Յայտագրին երրորդ բաժինը, «Խօսք Սիրոյ և Շնորհակալութեան», ներկայացուց Մարգ Մարգարեանը և Պրիանա Բամպակեանը:



«Հայկական Թատրոն»ը պատկեր մը ներկայացուց Փագ Յակոբեանի «Կոունկը Կը Կանէ» թատերավէպէն: Մեր դերակատար ընկերները իրենց արհեստավարժ կատարումով ներշնչեցին ներկաները:

SOARING TO NEW HEIGHTS!



# ՏԱՐԵԿԱՆ



Ալեւն Հովասափեան և Միլի Բէօթօլլեան ներկայացուցին յարտագրի չորրորդ ու վերջին բաժինը՝ «Խօսք Հայրենիքի և Յանրժոյթեան»ը:



Արի Գազանճեան բեմ ելա Սիլվա Կապուտիկեանի մէկ գործով՝ «Մտորումներ Ճանապարհի Կէսին», զոր արտասանեց հարուածող շեշտերով և այտալայտութեամբ:



Տիյօն Շախվերդեանը «թափառական աշուղ»ի տիպարին տակ կատարեց յայտագրին «Խօսք Երախտագիտութեան և Հաւատքի» բաժնին յատուկ արտասանութիւնը՝ Յովհաննէս Թումանեանի «Թմկաբերդի Առումը» վիպերգէն հատում մը:



Յայտագիրը իր կատարին հասա և վերջ գտա խմբային արտասանութեամբ: Այսպէս՝ գրեթէ 80 հոգիներ խումբը Օր. Լորա Գուլումճեանի ղեկավարութեան տակ տարուած խիտ աշխատութեան իբրեւ նախանձեղի արդիւնք մէկ շունչ ու մէկ մարմին՝ արտասանեց Փագ Յակոբեանի «Ազգային Յաղթերգութիւն» գործէն համադրութիւն մը: Սրահը յոսնկալս ծափահարեց մեր ընկերներուն այս յաղթանակը և հզօր ելոյթը:

## Յ. Պարոնեան

*Միրէշ Քէօրոլեան*

- Յարգելի Պարոն Պարոնեան, դուք բնաւ կը զգա՞ք, որ ձեր կեանքը աղքատության մէջ անցուցիք, որովհետեւ ժամանակին բարձրաստիճան էֆէնտիները եւ «ազգային ջոշեր»ը կը բննադատէիք։
- Ես չեմ զղջար որ աղքատ մնացի անկեղծ ըլլալուս համար․ այս ատեններ ուրիշ մարդ չկար, որ համարձակութիւնը ունենար ընելու այն ինչ որ ես ըրի։
- Ուրա՞ն էք որ կը շարունակէք համբաւոր մնալ, որովհետեւ ժողովուրդը տակաւին նոյն թերութիւնները ունի, թե՛ այս երեսյօք կը տխրեցնէ ձեզ։
- Այս երեսյօք մէկ կողմէն անշուշտ յուզիչ է․ բայց լաւ է որ կը շարունակեմ ձեզի ծանօթ մնալ․ մարդիկ տակաւին իմ գործերս կարդալով կրնան փոխուիլ կամ… ծիծաղիլ։
- Կը զարմանա՞ք, որ ձեր մահուրընէ ետք ժողովրդական դարձաք եւ ոչ թէ

կենդանութեան ատեն։

- Պ. Ոչ՛ Միրէյ, չեմ զարմանար․ շատ մը հըռ-չակատր անձեր ժողովրդական դարձած են իրենց մահուրընէ ետք․ օրինակ՝ Եկարիշ Վան Կոխը։ Ժողովուրդը երբեմն զանոնք կորսնցնելէն ետք է որ կ'անդրադառնայ, թէ ինչ թանգահն են այդ հանճարները։
- Հ. Այսօր ընկերային ի՞նչ թերութիւններ պիտի ծաղրէիք։
- Պ. Եթէ այսօր գրէի, կարծեմ տակաւին ժողովուրդին կեղծատրութեան մասին պիտի շարադրէի․ օրինակ՝ սուտ ընկերներու մասին պիտի գրէի, որոնք միայն անձնական շահի համար կան։
- Հ. Ի՞նչ պատգամ ունիք մերօրեայ հայ սերունդին համար։
- Պ. Հայ երիտասարդութեան համար միակ փափաքս այն է, որ միշտ բարութեան եւ հայրենիքին նային եւ լաւ ու անկեղծ կեանք ապրին։
- Հ. Պարոն Պարոնեան, երբ երիտասարդներ ձեր գործերը կարդան, ի՞նչ հիմնական դաս կ'ուզեք որ առնեն։
- Պ. Կ'ուզեմ տեսնել երիտասարդներ, որոնք

էիք․ որբանոցը ձեզի ի՞նչ հաճոյք կու տար։

- Պ. Քանի որ ես երեխայ չունէի, երեխայ ունենալու հաճոյքը կը զոհնացնէր։ Օրերս կ'անցնէի փոքրիկներուն հետ խաղալով ու այդպէս զաւակի մը սէրը կ'առնէի։
- Հ. Երեխայ չունենալը ինչքա՞ն պարսպութիւն թողեց ձեր սրտին մէջ։
- Պ. Կը սխալիս Արմինէ․ ես երեխայ ունէի․ հարիւրներով։ Որբանոցի պզտիկները, բոլորն ալ, իմ զաւակներս էին։
- Հ. Դուք հիմա եթէ ողջ ըլլայիք, ի՞նչ գործ կ'ուզէիք ընել։
- Պ. Ես կ'ուզէի նոր Հայաստաններ ստեղծել, որովհետեւ ես չէի կրնար իմ հայրենիքս վերադառնալ։
- Հ. Պարոն Թէքէեան, մենք կարդացի՞նք նաեւ որ դուք էջմիածին եղած էիք։ Ի՞նչ գործով էր այդ ճամբորդութիւնը։
- Պ. Այո, 1910ին էջմիածին գացի իբրեւ Եգիպտահայոց պատգամատր՝ կաթողիկոսական ընտրութիւններու մասնակցելու։ Այս պտոյտը ինձի առիթը տուաւ որ ես հայերնիքիս կարօտը առնեմ։

մը ունի․ սակայն յատակն է ուր իր փրկիւրներն են։ Ես ալ այսպէս զգացած եմ․ ուրիշներ իմ ներքին ցաւերս չէին տեսներ։

- Հ. Անդրադարձած եմ որ դուն երբեք չես լուսանկարուած։
- Պ. Ըիշդ է որ չեմ լուսանկարուած։ Սակայն, մահէս ետք մտերիմ բարեկամ մը իր յիշողութեամբ զիս նկարեց․ այդ նկարն է որ դուք այսօր կը տեսնէք ձեր դասագիրքերուն մէջ։
- Հ. Մահը վախճալի՞ք էր քեզի համար։
- Պ. Ես մեռնելէն չեմ վախցած․ ընդհակառակը՝ մահը իմ փրկութիւնս պիտի ըլլար․ ես ոչ թէ մահէն, այլ իմ յիշատակիս թատամիլէն սարսափած եմ։
- Հ. Դուն մերժուածի հոգեբանութիւն մը կը պարզես քու գործերուդ մէջ․
- Պ. Կեանքիս ըմթացքին, մանաւանդ որ թոքախտաւոր էի, չունէի ընկերային մեծ շրջանակ։ Մահէս ետք էր որ գրասէր ուխտատրներ այցելեցին շիրիմս։ Անոնք են որ ինձի համակրանք ցոյց տուին ու յիշատակս կենդանի պահեցին։
- Հ. «Տրտու՛նք»ը կը կոչուի գլուխ–գործոցդ։



*Յակոբ Պարոնեան*  
(1843-1893)

կրնան ստեղծել այն ընկերութիւնը որ ես կ'երազէի։ Մարդ պէտք է որ անկեղծ ու պարզ ըլլայ, որչափ ալ հարուստ ըլլայ, կամ բարձր դիրք ունենայ։ Ընորհակալ եմ Պարոն Պարոնեան։ Այո, դեռ շատ բաներ պէտք է փոխուին մեր գաղութիւն մէջ, բայց զոնէ գիտեմ, թէ ձեզ կը կարդան ու կը ծիծաղին։ Կը յուսամ, որ այլեւս անգամ մըն ալ ձեզ անհանգիստ չենք ընէր։ □



*Վահան Թէքէեան*  
(1878-1948)

- Հ. Ինչո՞ւ դուք շատ կրօնասէր էիք։
- Պ. Որովհետեւ, կը հաւատայի որ երբ եկեղեցւոյ մէջ էի, Հայաստանի մէջ էի։ Ես ապրած եմ սփիւռքի տարբեր երկիրներու մէջ, բայց եկեղեցին ինձի համար հոգեւոր Հայաստան մըն էր։
- Հ. Դուք կը կարծէ՞ք որ ձեր գրածները դեռ այսօր ալ կարեւոր են։
- Պ. Այո, որովհետեւ դեռ սփիւռքահայեր կան։ Անոնք պէտք է դեռ կարդան մեր հայրենիքի եւ եկեղեցւոյ մասին, որ չմոռնան զանոնք։ Իմ գրութիւններս կարդալով բոլորը կրնան ազգասէր հայեր մնալ։ □



*Պետրոս Պարոնեան*  
(1851-1972)

- Այդ կոչումը ինչո՞ւ։
- Պ. «Տրտու՛նք»ը գրեցի երբ կեանքիս վերջը կը մօտենար․ այդ շրջանին ջղային ու շուարած էի։ Գրութիւնը եղաւ իմ խօսակցութիւնս Աստուծոյ հետ, ուր իմ ցաւերս ու զանգատներս արտայայտեցի։ Բայց մտածելէ ետք, զղջացի ըրածիս ու Աստուծմէ ներողութիւն խնդրեցի։ Սիրելի Պետրոս, կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել քու ժամանակիդ եւ մտերմութեանդ համար։ Նաեւ կ'ուզեմ քեզ վստահեցնել որ քու յիշատակը միշտ պիտի ապրի։ Եթէ նոյնիսկ բախտը չունենամ օր մը շիրիմդ այցելելու, ես կ'ուխտեմ քու գործերդ միշտ կարդալ։ □

## Դարուս Վախերը

*Միրէշ Քէօրոլեան*

Դարուս մարդը ունի տարօրինակ եւ չլսուած վախեր։ Անոնք, չեմ գիտեր, թէ ինչ ծնունդ ունին․ բայց ըստ հոգեբաններու անոնք տարածուածութիւն ունին եւ մարդիկ կը տառապին այդ հոգեկան վիճակներէ։

«ԾԵՐԱՎԱՍՏՈՒԹԻՒՆ»

Չափահասութեան հասնելու վախն է։ Յաճախ կը տեսնուի միջին տարիքի հասած անձերու մօտ։ Ծերավախները յաճախ երիտասարդները կ'աւտեն եւ անոնց կը նախանձին։ Անոնք կը սարսափին իրենց տարիքէն։

«ՓՉՈՒԿՎԱՎԱՍՏՈՒԹԻՒՆ»

Փշուկներէն վախնալն է։ Երեսակայեցէք փշուկավախ ընտանիքի մը զաւկին տարեդարձը առանց փշուկի։ Ա՛յն է կեանքը, որ փշուկավախ անհատները կ'ապրին․ մե՛ղք։

«ԹԹՈՒԱՇԱՎԱՍՏՈՒԹԻՒՆ»

Թթուաշ ուտելու, բռնելու կամ անոնց մօտենալու վախն է։ Թթուաշավախի մը համար անհանդուրժելի է թթուաշ ուտողի մը տեսարանը։ Ես անոնց կը յանձնարարեմ թարմ վարունգ ուտել։

## «Մահու Հրեշտակ» Ծագ Գէորգեան

*Մէրի Հիլպեան*



*Բժիշկ Ծագ Գէորգեան*

Բժ. Գէորգեանը արդէն գործադրած էր 100 անձնասպանութիւն։ 1999ին ան կրկին կը դատաւարտուի բանտարկութեան։ Բայց 1 Յունիս 2007ին ներում կը ստանայ այն պայմանով՝ որ այլեւս անձնասպանութիւն պիտի չկատարէ եւ պիտի չխօսի այդ նիւթի մասին։

Ինձի համար հաճոյք էր այս հանճար բժիշկի մասին ուսումնասիրութիւն մը ընել եւ սորվիլ, թէ ան ինչ ազդեցութիւն ձգած է մարդոց վրայ։ Իմ առաքելութիւնս է հիմա անոր «փիլիսոփայութիւնը» տարածել եւ անելի շատ կարդալ անոր մասին։ □

### Մահ ու Կենաց Խօսքեր Մէջբերումներ Ծագ Գէորգեանէ

*Թարգմանեց՝ Անի Քէշիշեան*

«Եթէ մարդ մը մահէն սարսափած է, իմ գործը այդ սարսափը վերացնել է»։

«Ոչ մէկը ցուցադրած է մահուան դոյզն վախ մը։ Անոնք կ'ուզեն վերջացնել իրենց օրհասը»։

«Բոլոր մեծ ոյժերը զիս լռեցուցին։ Մնաս բարով այս հիմնական մարդկային իրաւունքի ազատ խօսքի եւ ընտրութեան»։ □

«ԳՐԱԽՈՐԱՎԱՍՏՈՒԹԻՒՆ»

Գրաւոր քննութեան վախն է։ Աշակերտներ ընդհանրապէս գրատրավախ կ'ըլլան եւ քննութեանէն առաջ շնչահեղձ եւ մտահոգ վիճակի մէջ կը գտնուին։ Այսպիսի աշակերտներու պէտք չէ՞ արդեօք թելադրել որ «AP» դասեր առնեն։

«ՉՆԱՎԱՍՏՈՒԹԻՒՆ»

Չիմացիներու հանդէպ վախի զգացումն է։ Չնավախերը անդադար կը մտածեն, որ օր մը չիմացիները պիտի իշխեն աշխարհի վրայ։

«ՃԱՂԱՏԱՎԱՍՏՈՒԹԻՒՆ»

Մազ չունեցողներու հանդէպ վախն է։ Անոնք չեն սիրեր ճաղատ մարդոց մօտենալ։ Վախնալով որ օր մը իրենց մտզն ալ պիտի թափի։ Կը մտածեմ, թէ անոնք կը զանին նորածիններ։

Չեմ զարմանար եթէ օր մը լսեմ «վախավախութիւն»ը՝ վախ ունենալու վախը։ Խեղճեր՝ որոնք արդէն ամէն օր վախի մէջ կ'ապրին, ոչ թէ միայն զլուխ պէտք է հանեն իրենց վախը, այլ նաեւ մտահոգուին վախ ունենալու համար։ □

## «Հայաստան» Բարդ Google-ի Մէջ

*Սարին Քէշիշեան*

Ըստ վերջին տեղեկատուութեան Google-ի միջոցով՝ անցեալ տարի «Հայաստան» բառը 823 հազար անգամ որոնուած է։ «Հայաստան» եւ նման բառերու համացանցի վրայ որոնումը կարեւոր է, որովհետեւ ցոյց կու տայ, թէ օտարներ որչափ հետաքրքրուած են մեր հայրենիքով։ Google-ին տրամադրած տուեալները ցոյց կու տան նաեւ զքօսաշրջիկներուն հետաքրքրուածութիւնը Կովկասի այս ամենափոքր երկրին, որ հարուստ է բնական գեղեցկութիւններով ու պատմական յուշարձաններով։

«Travel to Armenia» եւ «Travel Armenia» բառախումբերը որոնուած են մօտաորապէս 2900 անգամ, իսկ «Armenian Tourism» եւ «Tourism in Armenia» բառակապակցութիւնները՝ 1600 անգամ։

«Where is Armenia?» բառակապակցութեամբ որոնում կատարած են բացառապէս Միացեալ Նահանգներու բնակիչները։ Հայաստանի աշխարհագրական տեղը գիտնալու փափաքը անելի մեծ եղած է «cowboy»ներու հայրենիքին՝ Թեքսասի մէջ։ Անոր կը հետեւին Վիրճինիա, Քալիֆորնիա եւ Նիւ Եորք նահանգները։

Այս լուրը զիս այնքան հետաքրքրեց, որ ես ալ փափաքեցայ իմ անհատական որոնումս կատարել։ Ընտրեցի մեր թերթի մէջ նախապէս տեղ գտած որոշ բառեր։ Արդիւնքը եղաւ հետեւեալը․

«Armenian Genocides»՝ 1,390,000 անգամ «Armenian Coffee»՝ 13,400,000 անգամ «Yerevan Zoo»՝ 755,700 անգամ «Vladimir Arzumian»՝ 131,000 անգամ «Armenian World Records»՝ 3,030,000 անգամ։ □

# Աշխարհի Ամենագեղեցիկ Դրոշմաթուղթը

Պրիանա Բամպակեան



Թորոս Ռոսլինի մանրանկարչությունը դրոշմաթուղթի վրայ

Վերջերս Աստրիոյ մայրաքաղաք Վիեննայի մէջ դրոշմաթուղթ հաւաքողներու տարեկան ցուցահանդէսի ընթացքին ընտրուեցան 2009ի աշխարհի ամենագեղեցիկ դրոշմաթուղթերը եւ բացիկները:

Ընտրուածներէն մէկն էր Հայաստանի փոսթային պետական ծառայութեան՝ «ՀայՓոսթ»ի կողմէ Սուրբ Ծնունդի առիթով հրատարակուած դրոշմաթուղթերը, որոնց վրայ տեղ կը գրաւեն Կիլիկեան Հայաստանի հռչակաւոր մանրանկարիչ Թորոս Ռոսլինի «Քրիստոսի Ծնունդը» եւ «Մոգերու Երկրպագութիւնը» անուն գործերը:

Դրոշմաթուղթերուն ձեւաւորողն է Ստեփան Ազարեան ու թողարկման արժէքը՝ 650 եւ 280 դրամ: □

## «ԼՂՀ»ն Թեւեր Կ'առնէ Նարեկ Խոտանեան



Ստեփանակերտի օդակայանը կը խորհրդանշէ արծիւի մը թռիչքը

Տասը տարիէ ի վեր Ղարաբաղի մէջ գործող օդակայան մը չկար. երկիրը կը մնար անհասանելի՝ միջազգային երթելակութեան: Այս վիճակը պիտի փոխուի 2012ի սկիզբը: Ամիսներ տեւող վերաշինութեան աշխատանքէ ետք մայրաքաղաք Ստեփանակերտի օդակայանը պատրաստ է վերաբացուելու:

Անդրանիկ թռիչքը պիտի կատարուի դէպի Երեւան, որ կը նախատեսուի տեւել երեսուն վայրկեան:

Թռիչքի տոմարը պիտի արժէ վաթսուն տողար Երեւանէն Ստեփանակերտ, իսկ յիսուն՝ Ստեփանակերտէն Երեւան:

Շատ կարեւոր էր որ Ղարաբաղի Հանրապետութիւնը ունենար օդակայան մը: Ասիկա ամբողջ աշխարհին պիտի փաստէ, որ ԼՂՀի ժողովուրդը անկախ պետութիւն ունի իր հայրենի հողերուն վրայ: Գործող օդակայանի մը գոյութիւնը պիտի ամրապնդէ ԼՂՀի պետութիւնը եւ պիտի արագացնէ անոր միջազգային ճանաչումը: □

# «ԵՐԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆ»

Միքէլ Քէօթուլեան



Երիտասարդ երգչուհի Եւա Ռիվասը «Apricot Stone» երգով Հայաստանը ներկայացուց Եւրոտեսիլի մէջ: Իրայատուկ էր երգը եւ նուագը, որուն ընկերացաւ Ճիվան Գասարեանը, աշխարհի ամենալաւ տուտուկահարը: Յիշենք նաեւ, որ տուտուկը շինուած է ծիրանի ծառէ եւ բեմը կը զարդարէր ծիրանի հսկայ կուտ մը: Եւան կրցաւ ապահովել եօթներորդութիւն:

Այս տարի Եւրոտեսիլը տեղի ունեցաւ 14 Մայիս 2011ին, Գերմանիոյ Տիւսէլտօքֆ



Եւա Ռիվասը եւ ծիրանի կուտը



Ինկա եւ Անուշ Արշակեան քոյրերը

Հայաստանը առաջին անգամ 2006ին սկսաւ մասնակցիլ Եւրոտեսիլին: Ամէն տարի անհամբեր կը սպասենք տեսնելու համար, թէ ո՞վ պիտի ներկայացնէ մեր երկիրը եւ ի՞նչ երգ պիտի երգէ: Մինչեւ այսօր հայրենի երգիչներու ներկայութիւնը լաւ արդիւնք տուած է եւ միշտ լաւագոյն տասի մէջ եղած է հպարտացնելով մեր ազգը:

Հայաստանի առաջին ներկայացուցիչը 2006ին Անուշ Արշակեանն էր, «Without Your Love» երգով: Այս երիտասարդ ու տաղանդաւոր երգիչը յաջողեցաւ ութներորդ դիրքը շահիլ: Հայ երգի երկրորդ ներկայացուցիչը Հայկոն էր: Ան երգեց «Anytime You Need» կտորը եւ իր նախորդին նման ութներորդ դիրքը գրաւեց: Անոր ներկայացումը իր բեմադրութեամբ՝ շատ հետաքրքրաշարժ էր:

Եւրոտեսիլ գացող երրորդ հայ երգչուհին Սիրուշօնն էր: Ան հանդէս եկաւ «Qele Qele» երգով: Իր երգը շատ ժողովրդականութիւն գտաւ Եւրոպական երկիրներու, մանաւանդ՝ Յունաստանի մէջ: Սիրուշոյի ներկայացման բեմադրութիւնը շատ աշխույժ էր եւ զգլխիչ: Ան ապահովեց չորրորդ դիրքը, որ մինչեւ այսօր Հայաստանի ձեռք բերած ամենաբարձր դիրքն է:



Տարի մը ետք երկու քոյրեր, Ինկա եւ Անուշ Արշակեանները, երգեցին «Ծան Ծան» երգը: Անոնք հայկական աւանդական տարազներով բեմ ելան, երգին եւ ներկայացումին տոհմիկ շունչ տալով: Դժբախտաբար չաջողեցան բարձր նիշեր ստանալ ու մնացին տասներորդ հորիզոնականի վրայ:

Իսկ անցեալ տարի, 2010ին, Ռուսահայ

քաղաքին մէջ: Հայաստանը ներկայացուց Էմին, «Պում-Պում» անուն երգով: Հակառակ անոր, որ երգը ունէր ե՛ւ Եւրոպական եւ թէ հայկական համ՝ ան չաջողեցաւ ընդունելութիւն գտնել քուէարկողներու կողմէ եւ դուրս մնաց կիսաաւարտականին:

Հաստատ գիտեմ, թէ յաջորդ տարիներուն հայ երգը ետդարձ մը պիտի ընէ եւ մեր ձեռք բերած առաջնութեամբ մրցումը պիտի կազմակերպուի Երեւանի Կարէն Տէմիրճեանի անուան համալիրին մէջ: □

## ԱՆԿԻՆ

«Լրագրութիւն» Ընտրովի Դասարանի Թերթ  
ՀԲԸՄ Վաչէ եւ Թամար Մանուկեան  
Երկրորդական Վարժարանի  
2495 E. Mountain Street  
Pasadena, CA 91104, USA  
www.agbumhs.org  
e-mail: newspaper@agbumhs.org

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

- Թալին Ազազեան
- Շանթ Ազազեան
- Տարեհիկ Ազազեան
- Ռիթա Աքեան
- Գարինա Բամպակեան
- Արամ Եսայեան
- Անդրու Թահմազեան
- Տանիքա Թաշճեան
- Ռազմիկ Կարապետ
- Ռաֆֆի Ղազարեան
- Մովսէս Ծօրճեան
- Էլիզապէթ Յօլաքեան
- Սեւակ Փոտորումեան
- Անի Քէշիշեան
- Նազարէթ Օհաննէսեան

ԴԱՍԱԿԱՆԴ ՌԻՍՈՒՑԻԶ  
Նորայր Տատուրեան

ԷԶԱԴՐՈՒԹԵԱՆ ՁԵՒԱԿՈՐՈՒՄ  
Վարանդ Չինչինեան